

Ք Ա Ր Ո Ջ

«Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստ-
նագոյնք են քան զորդիս լուսոյ»:

«Որովհետև այս աշխարհի որդիներն ա-
վելի իմաստուն են, քան որդիները լուսո»:
(Ղուկ. ԺԶ 8)

Միրելի հավատացյալ ժողովուրդ,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի արտասա-
նած խորախորհուրդ և բազմիմաստ առակ-
ներից մեկի վերջաբանն են այս խոսքերը,
որով Աստվածորդին գալիս էր դառնորեն
նկատելու, որ «այս աշխարհի որդիներն
ավելի իմաստուն են, քան որդիները լու-
սո»: Այդ առակը պատմությունն է մի ա-
նհրավ տնտեսի, որն այլևայլ միջոցներով
ու խոստոր ճանապարհներով յուրացնում էր
իր տիրոջ ունեցվածքը՝ առանց հետագա
հետևանքների մասին մտածելու: Եվ ահա
մի օր, լսելով նրա չար գործերի մասին,
տեղը կանչում է նրան իր մոտ և պահան-
ջում. «Տուր գիամար տնտեսութեան քո,
զի ոչ ևս կարես լինել տնտես»: Ցնցվում
է վերջինս իր անհեռաճկար ապագայի
տեսիլքից և մի յուրօրինակ միտք է հղա-
նում: Իր հաճապագորյա հացը վաստա-
կելու ակնկալությամբ, նա իր տիրոջ պար-
տապանների պարտքի մի մասը թողնում
է նրանց՝ ապահովելով վերջիններիս բա-
րեհաճությունն իր նկատմամբ: Տերն այս
իմանալով, նրան վտարելով հանդերձ, գո-
վում է նրա իմաստությունը, քանզի աշ-
խարհի որդիներն ավելի իմաստուն են,
քան որդիները լուսո...

Թեև իր բովանդակությամբ պարզ,
սակայն իր ներքին իմաստով շատ մութ
ծալքեր է իր մեջ թաքցնում այս առակը,
որի գաղտնիքների մեջ թափանցելիս կա-
րելի է մոլորվել և գնալ սխալ ճանապար-
հով՝ արդարացնելով տնտեսին ու նրա ա-

նհրավությունը: Մենք ևս փորձենք ըմբռնել
անհրավ տնտեսի առակի իմաստը և դրա
համար նախ վերլուծենք, թե ովքեր են
լուսո, և ովքեր՝ աշխարհի որդիները:

«Լուսո որդիներ» արտահայտությանը
Աստվածաշունչ մատչանում շատ չենք
հանդիպում: Սկզբնական շրջանում «լուսո
որդիներ» տիտղոսը վերագրվում էր երկ-
նային հրեշտակներին, սակայն կրոնի բա-
րոյական և ընկերային ըմբռնումների զար-
գացման հետ մեկտեղ զարգացում ապրեց
նաև վերջին հասկացությունը, և արդեն
«լուսո որդիներ» կարող էին համարվել բո-
լոր նրանք, որոնց համար «սկիզբն իմաս-
տութեան երկիտ Տեառն էր»: Այս հասկա-
ցության վրա վերջին երանգն ավելացրեց
Քրիստոս, երբ իրեն աշխարհի լույսն ան-
վանելով, ավանդեց. «Հաւատացէք ի լույսն,
զի որդիք լուսոյ եղիջիք» (Հովհ. ԺԲ 36):
Ուրեմն լուսո որդիներ ասելով պետք է
հասկանանք այն մարդկանց, ովքեր իրենց
մեջ ընդունել են երկնքից իջած ճշմարիտ
լույսը՝ Բանն Աստծուն:

Իսկ ովքեր են այս աշխարհի որդիները:
Այս հարցին անուղղակիորեն պատասխա-
նում են Փրկչի այն երկու հաստատումնե-
րը, թե «իշխան աշխարհիս այսորիկ դա-
տապարտեալ է» (Հովհ. ԺԶ 11) և «Իմ
արքայութիւն չէ յայսմ աշխարհէ» (Հովհ.
ԺԸ 36): Սրանով էլ հենց Քրիստոս հստակ
սահմանազատում է մտցնում երկու աշ-
խարհների և լույսի ու այս աշխարհի որ-
դիների միջև: Անշուշտ, այստեղ այս աշ-
խարհ ասելով պետք չէ հասկանալ երկիր
մոլորակը կամ մեզ շրջապատող բնու-
թյունը, այլ պետք է հասկանալ հասարա-
կական-ընկերային կյանքում տեղ գտած
ստախտությունը, անհավատարմությունը,
անհրավությունն ու նյութի պաշտամունքը:

Ուրեմն այս աշխարհի որդիները նրանք են, որոնց համար ղեկավար ակզրուք են հանդիսանում նյութական շահն ու մարմնական հաճույքները: Եվ ուրեմն աշխարհի և լուստ որդիների էական տարբերությունն այն է, որ առաջինները կապված են նյութականին, երկրորդները՝ հոգեկանին:

Իսկ ինչ վերաբերում է նշված իմաստությունը, այն այստեղ հատկապես ընդգրկում է ճարպկություն, խորամանկություն, խորագիտություն և հանդգնություն, որից հաճախ այնքան հեռու են որդիները լուստ: Անշուշտ մենք ինքներս պատմության վրա մի հայացք ձգելով, կարող ենք տեսնել, որ այս առումով «իմաստությունը» ավելի շատ ծառայել է չար և վատ նպատակների՝ պատերազմների, բռնությունների և շահագործումների, քան թե բարի ու լավ նպատակների՝ խաղաղության, եղբայրության, հավասարության:

Արդ, ի՞նչ հետևությունների պետք է մենք հանգենք այս պատմությունից և նրա վերլուծությունից: Ինչի՞ է մեզ կոչում այս անհրաժեշտ տնտեսն իր անհրաժեշտությամբ, սակայն մեզ իր «իմաստությամբ»: Պատասխանը պարզ է. Հիսուս լուստ որդիներին հորդորում է վատ օրինակից լավն առնել, ո՛չ թե խորագետ լինել ստի մեջ, այլ՝ ճշմարտության, ո՛չ թե անհրաժեշտ մեջ, այլ՝ արդարության, ո՛չ թե խարդախության, այլ՝ ազնվության: Ասվածը կարող ենք ամփոփել իր իսկ Հիսուսի խոսքերով. «Եղերուք խորագետ իբրև զօձս, և միամիտք իբրև զաղամիս» (Մատթ. Ժ 16): Արդ, անարգանքի պլունին զամելով ու խարազանելով հանդերձ տնտեսի անհրաժեշտությունը, ըմբռնենք և ընդունենք նրա իմաստությունը, և լուստ որդիներ լինելով ու մնալով, վերցնենք աշխարհի որդիներից այն, ինչը մենք կարող ենք օգտագործել այնպես, որ տիեզերական անծայրածիր հարթություններում և նույնպիսի մի անեղ տիեզերք հանդիսացող մարդկանց հոգիներում միշտ հնչի Աստվածային այն խոսքը, թե «եղիցի լուստ»:

Իսկ ի՞նչ է լինելու աշխարհի որդիների հետ: Մի՞թե բոլորն էլ դատապարտված են, և ամենքն էլ վաղ թե ուշ կանգնելու են դառը իրականության առաջ: Մի՞թե ամենքն էլ հեռացվելու են իրենց ասպարեզից, երբ հնչի Տիրոջ խոսքը. «Տուր զհամար տնտեսության քո»: Անշուշտ՝ ոչ: Որովհետև, ասում է Քրիստոս, «ոչ եկի թե դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ» (Հովհ. ԺԲ 47): Այդ իսկ պատճառով էլ Հիսուս առակի վերջում մի բաց

դուռ է թողնում այս աշխարհի որդիների համար՝ ասելով. «Ահարեք ձեզ բարեկամս ի մամոնայե անհրապոթեան. զի յործամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաիտենականս» (Հովհ. ԺԶ 9): Հետևաբար, կա փրկության ճանապարհ և վերջիններս համար: Դա անհրաժեշտ նյութի ազնվացումն է, խոտոր միջոցների ուղղումը, սխալ նպատակների ճշգրտումը, խավարի փոխարեն դեպի լուստ ձգտումը:

Սրանով է, որ կիրականացնա մեզ Հիսուսի առաքելությունը, որով հարթեցվելու էին բոլոր տեսակի անհրաժեշտություններն ու անհամաձայնությունները, վերանալու էր խավարը և մնալու էր միայն լուստը, քանզի չէին լինելու այլևս աշխարհի որդիներ, այլ լինելու էին միայն լուստ զավակներ՝ իմաստությամբ, խորագիտությամբ և մտքի թռիչքով օժտված:

Այն օրերից, երբ Պաղեստինում պատմվեց այս ուսանելի պատմությունը, անցել են քսան երկար ու ձիգ դարեր: Այդ դարերի ընթացքում Ավետարանի ցուացող լուստը երբեմն հզոր փայլատակումներով, երբեմն տխուր անկայծուններով հասել է մեզ: Ի՞նչ ճանապարհ ենք ընտրելու մենք, ի՞նչ ենք դառնալու՝ լուստի, թե՛ աշխարհի որդիներ: Իմ կարծիքով, այս առակի վերլուծությունից հետո պատասխանը կարող է լինել միայն՝ լուստի որդիներ:

Եվ այսօր, երբ աշխարհում համընդհանուր պայքար է ծավալվում ժամանակակից անհրաժեշտ տնտեսների դեմ, որոնք ցավոք դեռ գոյատևում են և կատարում իրենց սև գործը կաշառակերության, խաբեության, անհրաժեշտ և մամոնային ծառայելու խավար ճանապարհներով, ավելի քան այժմեական է հնչում Հիսուսի այս խորհմաստ առակը: Եվ այժմ, երբ գարնանային վերազարթոնքի այս օրերին ընդհանուր արթնություն և թարմություն է սպրդում մեզ մեր հասարակությունը, ավելի քան սթափեցնող է հնչում համայն մարդկության Տիրոջ ձայնը, որ արձագանքում է յուրաքանչյուրիս հոգու մեջ. «Տուր զհամար տնտեսության քո»: Արդ, սկանչ դնելով այդ երկնառաք ձայնին, մերժենք տնտեսի անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ ընդունենք նրա իմաստությունը, լինենք և՛ խորագետ, և՛ միևնույն ժամանակ միամիտ, որպեսզի խոստացված երկնային թագավորությունը դուրս հորդի մեր հոգիներից և տարածվի ողջ աշխարհով մեկ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: